Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-593-23.05.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության 2021 թվականի հունիսի 30-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 8-րդ հոդվածում.

1. 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, հետեւյալ բովանդակությամբ.

«3. Մինչդատական վարույթում տեսաձայնագրմամբ կատարված գործողության հակիրճ բովանդակությունը եւ հիմնական արդյունքները նշվում են վարութային այդ գործողության ընթացքում կազմված համառոտ արձանագրության մեջ:

Տեսաձայնագրության բնօրինակը պահպանվում է էլեկտրոնային տվյալներ պահպանելու համար նախատեսված կրիչում, եթե այն պահպանվել է շարժական կրիչի վրա, ապա կրիչը կցվում է արձանագրությանը:».

2. 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, հետեւյալ բովանդակությամբ.

«5. Դատական վարույթում կատարված գործողության ընթացքը եւ արդյունքներն ամրագրվում են ձայնագրմամբ եւ համակարգչային եղանակով, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Դատական վարույթում տեսաձայնագրված գործողության հակիրճ բովանդակությունը եւ հիմնական արդյունքները նշվում են վարութային այդ գործողության ընթացքում կազմված համառոտ արձանագրության մեջ: Տեսաձայնագրության բնօրինակը պահպանվում է էլեկտրոնային տվյալներ պահպանելու համար նախատեսված կրիչում, եթե այն պահպանվել է շարժական կրիչի վրա, ապա կրիչը կցվում է արձանագրությանը:».

3. 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, հետեւյալ բովանդակությամբ.

«7. Էլեկտրոնային եղանակով ամրագրված քրեական վարույթի նյութերը պահվում են էլեկտրոնային համակարգում (էլեկտրոնային քրեական վարույթ կամ էլեկտրոնային քրեական գործ), իսկ համակարգչային եղանակով կամ ձեռագիր պատրաստված փաստաթղթերը՝ նաեւ թղթային տարբերակով: Համակարգչային եղանակով կամ ձեռագիր պատրաստված փաստաթղթերը, ինչպես նաեւ էլեկտրոնային տվյալներ պահպանելու համար նախատեսված կրիչներում կամ շարժական էլեկտրոնային կրիչներում պահվող տվյալների բովանդակությունը ներբեռնվում է էլեկտրոնային համակարգ: Առարկաները եւ այլ նյութերը պահվում են որպես վարույթի էլեկտրոնային նյութերի բաղկացուցիչ մաս, իսկ դրանց լուսանկարները ներբեռնվում են էլեկտրոնային համակարգ: Այդ առարկաների եւ նյութերի ցանկը եւս ներբեռնվում է էլեկտրոնային համակարգ:»:

4. 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, հետեւյալ բովանդակությամբ.

«8. Էլեկտրոնային համակարգի շահագործման եւ անվտանգության կանոնները եւ շարժական կրիչի բնութագիրը սահմանում է Կառավարությունը:»

Հոդված 2. Օրենսգրքի 214 հոդվածում.

1. 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, հետեւյալ բովանդակությամբ.

«5. Տեսաձայնագրման միջոցով կատարված քննչական գործողության արձանագրությունն ապացուցման գործընթացում չի կարող օգտագործվել առանց տվյալ քննչական գործողության տեսաձայնագրության հասանելիության կամ տեսաձայնագրության էլեկտրոնային կրիչի:».

2. 10-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, հետեւյալ բովանդակությամբ.

«10. Տեսակապի միջոցով կատարված քննչական գործողության արձանագրությունն ապացուցման գործընթացում չի կարող օգտագործվել առանց տվյալ քննչական գործողության տեսաձայնագրության հասանելիության կամ տեսաձայնագրության էլեկտրոնային կրիչի:»:

Հոդված 3. Օրենսգրքի 223-րդ հոդված 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, հետեւյալ բովանդակությամբ.

«8. Հարցաքննության տեսաձայնագրությունը պահվում է էլեկտրոնային տվյալներ պահպանելու համար նախատեսված կրիչում եւ դրան հասանելիություն տրամադրելու միջոցով կարող է օգտագործվել մինչդատական վարույթի ընթացքում: Հարցաքննության տեսաձայնագրությունը կարող է պահվել նաեւ շարժական էլեկտրոնային կրիչում: Տեսաձայնագրության էլեկտրոնային տվյալներ պահպանելու համար նախատեսված կրիչում պահվելու դեպքում՝ դրա հասանելիության մասին համապատասխան նշում է կատարվում արձանագրության մեջ, ինչպես նաեւ առկայության դեպքում դրան են կցվում տեսաձայնագրության հիման վրա քննիչի կազմած եւ ստորագրած ցուցմունքի թղթային կամ էլեկտրոնային եղանակով կատարված եւ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված վերծանումը: Տեսաձայնագրության շարժական կրիչում պահվելու դեպքում՝ այն կցվում է արձանագրությանը: Ցուցմունքի վերծանումն ապացուցման գործընթացում կարող է օգտագործվել այնքանով, որքանով համապատասխանում է տեսաձայնագրության բովանդակությանը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 483-րդ հոդվածում.

1. 12-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, հետեւյալ բովանդակությամբ.

«Սույն օրենսգրքի 8-րդ հոդվածով սահմանված մինչդատական վարույթում վարութային գործողությունների՝ էլեկտրոնային եղանակով ամրագրմանը վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի սեպտեմբերի 1-ից:».

2. Լրացնել նոր 12.1-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«12.1. Սույն օրենսգրքի 8-րդ հոդվածով սահմանված դատական վարույթում վարութային գործողությունների՝ էլեկտրոնային եղանակով ամրագրմանը վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը: